33. ՄԻՆ ԿՅՈՂՈՒ ՆԱՂԼԸ

Ինում ա, չի ինում մին կյող մարթ ա ինում։ Էս մարթը միշտ կյուղոթուն ա անում։ Էնքան կյուղոթուն ար ըրալ, վար լոխ ընդրան կյող ին կանչում։

Մին օր նա մտքումը տինում ա, էլ կյուղոթուն չանե։ Ամմա վար ուրաշն ճընանչըմ ին հունցու կյող, որոշում ա ուրանց սրշանան տուս կյա։

Ճընապարվում ա մին օրիշ սրշան, համ էլ ուրթումն ա օտում, վեր էտ կործավը էլ ղրաղվե վուչ։

Քյինում ա, քյինում, մին տեղ մթնում ա, նի յա մննում մին տուն, ասըմ.— Խնթրըմ ըմ էս քշեր ինձ ղոնաղ պահիք։

Տնատարն ասըմ ա.— Հի՞նչ կինի՞, ղոնաղն աստծունն ա՞։

Տա նի յա մննում էտ տունը։ Տրա համար տնեցեքյ չորս ծու յըն իփում։ Օտում ա, քշերը քոն ինում։ Առավոտը քշերավ եր ա կենում, ճընապարվում։

Բիրդան ճընապարեն մետն ա քըցում, վեր կերած ծվեն հախկը ավալ չի։ Էտ պենը հաշվի քցելով վեր կյուղոթուն ա, ետ ա տեռնում, վեր չորս ծվին հախկը տա։ Վեր շենան մուտանըմ ա, էն տնատարը ուշունց ա տամ, ասըմ.— Էն չորս ծվին հախը խե՞ չըս տվալ։

Էտ մարթն ասըմ ա.— Ա՛յ մարթ, մննաս ընգալ ա, եկալ ըմ վեր տամ, հի՞նչ ըմ տլական, ասե։

Հաշվում ա, ասում.— Չորս ծուն թոխս կը տնի, չորս ճոտ

տուն կրկյար, ընդրանց էլ կմծցնի, ծու կրծին, մնէլ չորս թուխսու-
կան կտեռնար։

Էստի հաշիվ ընելավ կտեռնա էրկու հարուր հավ։ Հախկը չորս
հարուր մանեթ։

Էտ մարթը զարմանում ա, ասում.— Ա՛ մարթ, չորս ծու յըմ
կերալ, ասե չորս ծուվեն հախկը տամ։

— Չէ՛, վեր չէ՛։

Ծուվեն տարը սուդի յա տամ։ Էտ մարթը ճընապարավը մը-
տրծելավ քյինում ա։

Ճընապարեն պտահում ա մին չորան, տեսնում ա, վեր էս մարթը
տխուր ա, հըրցնում ա.— Ախպեր, խե՞ տխուր ը՞ս։

Ասում ա.— Հի՞նչ անի՞մ, վեր տխուր չինիմ։ Հինչու կա, լոխ
նաղլ ա անըմ։

Էտ չորանն ասում ա. — Դիմումետ մաչին ինձ էլ շհաղ կյիրի։
Ցրես կործը ատկաղ ըմ ընեական։

Էս մարթը իտի յա անըմ։ Սուդը պավեսկա յա զարկում, վեր
էս հինչ օրը ներկայանան սուդեն։ Լոխ ասած օրը ներկայանում ըն
սուդեն, համմա չորանը մին թիքյա՛ ետանըմ ա։

Վեր կյամ ա, սուդյան ասըմ ա.— Հիմմա՞ր, քանի՞ կլխանե
յըս, վեր իմ ասած ժամանակին ներկայացալ չըս։

Չորանն ասըմ ա.— Սուդյան ապրած կենա, լոբի յի իփում,
վեր պերիմ ըռաչավտ վարիմ, կանաչ-կյարմուր ծաղիգյնի տեռնա։

Սուդյան կզնվում ա, ասում.— Հիմմար անասուն, էփած լոբին
կիսնե՞։

Չորանը ասում ա.— Պա իփած ծուն ճոտ կտեռնա՞՞, վեր էտ
մարթը իտի յա հաշիվ անըմ...

Ստրանավ կործը աթկաղ ա տրեռնում։